Ա/14 ՅՈՒՆԻՍ 1904

Ա. ՏԱՐԻ — ԹԻՒ 50

ԵՐԱՉՔ ԵՒ ՄԻՏՔԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Քր. տարեկան

Հասցէ՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Русе

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ

Հետաքրքիր աւելի սուր, աւելի խառն և ապրելի լայն ծաւալ է ստանում սոցիալիստական պայքարը Եւրոպայի և Ամերիկայի սոցիալիստական զանազան կուսակցութիւնների մէջ։ Կռիւը, որ այդ կուսակցութիւնները մղում են միմեանց դէմ, արիւնի դաշտերը բաց չի անում և ո՛չ էլ մարդկային դիակներ փռում աչու ձախ։ Գաղափարային այս գործողութիւնը դեսպոտիզմին ու միլիտարիզմին է յատուկ։ Սոցիալիստական աշխարհը, պատմականապէս ժառանգորդն կաշման բնապահանչ պարտականութեան մէջ, հենց այդ դաշնութիւնը չնչելու համար է միայն չանքերը գործ դնում....։

Իրագործելու համար իւր վեհ նպատակը—մարդկային ամենատեսակ թշառութիւնների չնչումը, որ կայանում է գաստակարգերի գոյութեան, դրանց միմեանց շահագործման և, այդպիսով մարդկային ստրկամտութեան տնտեսական ասպարէզի մէջ մի բաւական փոքրամասնութեան ձեռքում, — այդ աշխարհը երկու խոշոր բանակների է բաժանւում այսօր և յայտնի թշնամութիւն բուրժուազիայի տիրապետութիւնն ոչնչացնելու համար իւր գործունէութեան երկու զլխաւոր ուղղութիւնները հրապարակ գնում աւելի որոշ, աւելի պարզ կերպով, քան առաջ էր։ Սակայն և այնպէս նպատակը երկու ուղղութեան համար էլ ընդհանրապէս նոյնն է մնում։

Ի՞նչպէս և ինչպիսի՞ տակտիկայի գործադրութեամբ պէտք է առաջ տանել սոցիալիստական կռիւը, ո՛ր համապատասխանի նորագոյն վարդապետութեան ոգուն, ո՛ր գիտութեան և պատմութեան անցեալ օրէնքների և իրողութիւնների ծոցից բղխած լինի և տնտեսական ներկայ պայմանների ճշգրիտ արտայայտութիւնը հանդիսանայ՝ առանց անհատական քմահաճոյքի, մասնաւոր դիտումների և թեթև ըմբռնումի կնիքը կրելու իւր վրայ։

Բացի սոցիալիստական մամուլից՝ այս հարցի ամենալաւ և ամենանպատակայարմար պատասխանը ձեռակերպելու համար, ինչպէս առաջները, նոյնպէս և այժմ, գումարում են սոցիալիստական կոնգրէսները, որոնց մէջ, աւելի քան ուրիշ հարցերը, սոցիալիստական գործունէութեան տակտիկայի հարցն է յաճախ երկար ժամանակ խլում և ժողովականների—պատգամաւորների մտքերն զբաղեցնում, լարում, որով և — երկաքսան վիճաբանութիւնների, լուսաբանութիւնների միջոցին— Մարքսի վարդապետութեան այլ կողմերի վրայ էլ է լոյս սփռւում։

Ինչքանով տարբեր են հասկացողութիւնները, կարծիքները և սոց.-տնտեսական քաղաքականութեան—եթէ կարելի է այս բառը գործ ածել— փոքձառութեան յիշատակող ապացոյցներն այս հարցի վերաբերմամբ, այսուամենայնիւ սրանք երկու զրուպիրօկի են բաժանւում և գլխաւորապէս երկաուղղութեան ճանապարհներ բաց անում սոցիալիստ գործիչների, սոցիալիստ քանուորական բանակների առաջ, որոնց մէջ պայքարը միմեանց դէմ պրինցիպիական է և ո՛չ շահադիտական, նեղմտական և բանակալական, ինչ որ ամեն բուրժուազական հասարակութեան մէջ է տեղի ունենում։ Եւ այսպէս՝ այս երկու ուղղութեամբ առաջ ընթացող բանակների մէջ պակաս չեն սակայն սոցիալիստական այնպիսի փոքրիկ համախմբումներ կամ ընդհանուր բանակի մէջ, ընդհանուր շրջանակի մէջ գտնուող մարմիններ, որոնք իրանց հետևած գրլխաւոր ուղղութեան մէջ անգամ այս կամ այն երկրորդական պատճառներով եթբեմն—երբեմն բոլոքոյ տարբ են ներկայանում — սակայն ո՛չ իրանցբանակից դուրս գալով — և այդպիսով կամենում, ըստ իրանց հայեացքների, իրանց ստացած սոցիալիստական կրթութեան պաշարի, բարեշրջել ընդհանուրի ընտրած ուղղութեան այս կամ այն մասը և մոմենտի, միջավայրի, սոցիալական շրջանային աննիջական քաղաքական պահանջներին յարմարեցնել այն, որպէսզի գործն աւելի արագ և աւելի պակաս զոհողութիւններով կատարւի։

Սակայն այսպիսի քայլերը երկրորդական երևոյթների վաղանցուկ բնաւորութիւն են ստանում յաճախ և երբեմն էլ այնքան մեծ կամ երբէք ազդեցութիւն չեն գործում միևնոյն բանակի գործունէութեան ընդհանուր ուղղութեան ընթացքի վրայ և ո՛չ էլ նրան այլ շաւղի վրայ թեքում, և այս՝ այնկրկնակի պատճառներով, որ յիշած ընդհանուր ուղղութիւնը, իբրև մայր ուղղութիւն, թէ փնքն է պատճառ դառնում ամբողջ բանակի առանձին կազմակերպելուն և առանձին գիրք բռնելուն բուրժուազիայի դէմ մղող յայտնի կռւի մէջ, հետևաբար և՛ նրա— իբրև ուրոյն հաւաքական մարմնի —բնաւորութիւնը յատկանիշում, և թէ՛ դիմացի երկրորդ բանակի մրցմանոյժն է լինում մէջտեղում, որի դէմ պաշտպանելը, որի մէջ համոզմունքի նեղմում կատարելն առաջին բանակի իրաքանչիւր անդամի պարտականութիւն է համարւում։

Այս կրկնակի պատճառների ազդեցութեամբ չէզոքանում են սոցիալիստական ընդհանրութեան մէջ երկրորդական ուղղութիւնները կամ—աւելի ճիշտ կը լինի ասել — ընդհանուր ուղղութեան այս կամ այն պակասութեան, այս կամ այն մասի անհամապատասխարմարութեան պատճառով ծագած անհամաձայնութիւնները, տարաձայնութիւնները, և հրապարակում մնում են միա՛յն — ինչպէս ասացինք — երկու խոշոր աչքի ընկնող ուղղութիւններ՝ սոցիալիստական գործունէութեան տակտիկայի տեսակէտից իհարկէ։

Եւ այս խոշոր, աչքի ընկնող ուղղութիւնները աւելի լաւ, աւելի պարզ եւ աւելի որոշ կերպով արտայայտւում են Ֆրանսիայի և Իտալիայի սոցիալիստների գործունէութեան մէջ՝ մանաւանդ վերջերումս։

Աւելի քան Ֆրանսիայում՝ Իտալիայի սոցիալիստները—թէև գեռ իրանց անհատական ամբողջութեան մէջ տրուած շրջանում— այսօր իրապէս երկու բանակների կամ երկու անհաշտ ծայրերի են բաժանուած և իրարդէմ պայքար են մղում՝ իւրաքանչիւրը նրանցից աշխատելով գործունէութեան իւր ուղղութիւնը, իւր տակտիկան պաշտպանելու և Իտալիայի ամբողջ սոցիալիստների մէջ ընդհանրացնելու համար այն։ Իսկ մի երրորդ բանակ էլ—կազմուած այդ երկու ուղղութիւնների մէջ կի կամ միւսի հետ մասնաւոր կերպով համակարծիք կամ հակակարծիք, ինչպէս և երկուսին էլ բոլորովին դէմ եղող սոցիալիստներից, սակայն իրանց հաւաքական համաձայնութեամբ մի այլ հակադիր ուղղութիւն երևան չը բերող բազմութիւնից, — որի համար չափազանց թանկ է Իտալիայի սոցիալիստների ամբողջական կազմը կամ նրանց միութիւնը, ուսերը թափ տալով աշխատեց և աշխատում է ամեն կարելի միջոցները գործ դնել՝ հաւանական պառակտումի առաջն առնելու համար, մի պառակտում սակայն, որ միայն պաշտօնապէս չի կատարւել և հրապարակի վրայ չի, և այդ էլ շնորհով հենց այս — երկու կրակի մէջ մնացած—բանակի կամ իրա պարագլխի, որ կոմպրոմիսների մէջ մտնելու առաջարկն է անդադար սեղանի վրայ նետում։

Ո՛ևի լիոնիստները՝ Իտալիայում կամ օպորտիւնիստ—ռէֆորմիստները, որոնք աւելի չափով բուրժուազական առաջադէմտարրից են կազմուած — եթէ մի բոպէ ընդունելու լինենք, թէ նրանց մէջ բուրժուազական դալրաթաթախ կատուներ *) չեն սըպրդել, — յոյս ունեն և հաւատացնում են, որ ներկայ սոցիալական կազմը աստիճանաբար բարեփոխելով՝ կարելի կը լինի սոցիալիզմի թագաւորութիւնը վերջնականապէս հաստատել մարդկութեան մէջ, և այդ նպատակին հասնելու համար նրանք չեշտում են ռէֆորմներ ձեռք բերելուն,

*) Այս մասին առանձին կը խօսենք։

հրաժեշտութեան վրայ — մի միջոց, որ նրանց աչքում թէ՛ խաղաղասիրական է և թէ՛ աւելի համապատասխան մարքսիզմի վարդապետութեան՝ տակտիկայի տեսակէտից։ Նրանք յոյս ունեն և աշխատում են բուրժուազիայի ամենաազատամիտ ներկայացուցիչների միջոցով այս կամ այն րէֆորմն ընդունել տալ պարլամէնտում, որով և՛, այդ պարլամէնտական պաշտօնեաների շնորհով, ձեռք են բերում այն, ինչ որ հարկաւոր է իրանց և ի՛նչի համար որ ուրիշ ուղղութեան պատկանող սոցիալիստները մեծամեծ զոհողութիւններ են յանձն առնում։ Եւ, ինչպէս պնդում են նրանք, ամէն մի ձեռք բերած րէֆորմ կազմելով սոցիալիստական յեղափոխութեան մի մասը՝ առանձին-առանձին յաղթանակած րէֆորմների գումարը տանում է մարդկանց դէպի հասարակական մի նոր կազմակերպութիւն, որ հիմնւում է աշխատանքի վրայ, և որ այդ րէֆորմական գումարը յարաբերական է այն արմատական միջոցի գործադրութիւնից սպասուող հետևանքին, որի նպատակայարմարութիւնն են պաշտպանում իրանց հակառակորդները, մոռանալով սակայն, որ այդ արմատական միջոցի՝ սոցիալիստական բռնի յեղափոխութեան՝ գործադրութեամբ նրանք, իբր թէ, Մարքսի վարդապետած գիտական սոցիալիզմին դէմ են գնում, սոցիալ-տնտեսական էւոլիւցիայի գաղափարը ջախջախում, բուրժուազիայի դէմ մղած կռիւը զուտ տնտեսական բնաւորութիւնից զրկում... Եւ մի շարք այսպիսի առարկութիւններ։

Բացի այս բոլորից՝ կայ սակայն և՛ մի այլ բնադրօսիկ հաւաստիացումն էլ րէֆորմիստների ասածների մէջ, որ պակաս ուշադրութեան չը պէտք է առնել։

— Րէֆորմը, ինչպէս նրանք են պնդում, փոխում է քաղաքական հասարակութեան ներկայ կազմը, նրա իրաւունքները սահմանափակում և նրա քմահաճոյքներին չափ դնում, հետևաբար և նախկինից աւելի լայն միջոցներ ու ասպարէզ տալով շահագործուող դասակարգին՝ մեծացնում, ուժեղացնում ու թարմացնում է պրօլէտարիատի էներգիան, և այդպիսով քանդում ու ոչնչացնում է ուժերի այն հաւասարակշռութիւնը, որով բուրժուազական հասարակութիւնը — պրօլէտարիատի պատմական հակառակորդը — իւր գոյութիւնն է պահպանում, իւր տնտեսական—քաղաքական տիրապետութիւնը շարունակում։

Որպէսզի աւելի կատարեալ կերպով համոզած լինեն իրանց լսողներին՝ րէֆորմիստները պարտականութիւն են համարում բաց թողնել իրանց լեզւի սանձը մի տարօրինակ ճշմարտութիւն էլ ճառելու համար։ Բանւորական մասսաները, իբր թէ, բնազդաբար և ըստ անհրաժեշտութեան թեքւում են դէպի րէֆորմները, այսինքն՝ նրանք անցնում են րէֆորմիստների կողմը և բաւականանում են այս կամ այն րէֆորմն ստանալով, որով նրանց տնտեսական և այլ թշւառութիւնները հետզհետէ ոչնչացնում են իրանց դասակարգային կազմի մէջ...։

Եթէ ամփոփելու լինենք Իտալիայի «րեվիզիոնիստների» բոլոր ասածները՝ դուրս կը գայ այն, որ րէֆորմը նրանց նպատակն է կազմում և ո՛չ իբրև մի միջոց տանող դէպի իսկական նպատակը, և որ րէֆորմն հէնց ինքը ներկայանում է իբրև մի յեղափոխութիւն՝ սրա ամբողջական իմաստով։

Վ. Աղասեան

(Շարունակելի)

ՃԱՊՕՆԱՑԻ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐՈՒ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂՈՒԱԾ ՌՈՒՍ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐՈՒՆ

Ճաբոնի բանւորական սոցիալիստական կուսակցութիւնը հետևեալ նամակը ուղղած է ռուս սոցիալիստ ընկերներուն, որ հրատարակուած է ճաբոնացի սոցիալիստներու օրկան «Haimin Schimbun»ի մէջ։

«Թանկագի՛ն ընկերներ, շատ տարիներէ իվեր մենք կը լսենք ձեր մասին, յաճախ կը խորհինք ձեր վրայ, բայց հազարաւոր մղոններ հեռու ըլլալով ձեզմէ, մինչև ցարդ առիթ ունեցած չէինք ձեր ձեռքերը սեղմելու, ձեզի հետ յարաբերութեան մտնելու։ Տասն և վեց տարիներ անցած են այն օրէն, երբ դուք, սոցիալ-դէմօկրատական դրօշին տակ, սկսաք մարդկութեան մեծագոյն սկզբունքներ քարոզել։ Այս ժամանակամիջոցին սակայն բռնապետական կառավարութեան հալածանքը և ոստիկանական խժդժութիւնները երբէք չտեսնուած ուժգնութեամբ կը թափէին ձեր վրայ։ Ձեր նախորդները ենթարկուեցան ամենածանր փորձութիւններու, մատնուեցան թշուառութեան, սև սովի և անհամար չարչարանքներով նետուեցան բանտերն ու Սիպերիոյ անապատները և կամ մեռան կիյօթիններու տակ։ Եւ հակառակ այս բոլորովին, ձեր պատերազմային կորովը բնաւ չընուազեցաւ, այլ ընդհակառակը, ամէն մահուան վճիռ ձեր առնականութիւնը կաւելցնէր։ — Անցեալ տարի Ռուսաստանի զանազան սոցիալիստական խումբերը միացան և կազմեցին զօրաւոր կազմակերպութիւն մը և անկից իվեր ձեր երկրին մէջ ալ սոցիալիզմը դարձաւ զօրաւոր ոյժ մը։ Մենք կը յայտարարենք որ սրտանց կը ցաւակցինք ձեր ծանր վիճակին և կը հիանանք ձեր այն հաստատակամութեան վրայ, որով կը կռուիք ձեր հիմնական համոզումներուն համար։

Թանկագի՛ն ընկերներ, մեր կառավարութիւնները պատերազմի մէջ նետուեցան իրենց աշխարհակալական ձգտումները իրագործելու համար, բայց, մեզի, սոցիալիստներուս համար, ցեղային, երկրային և ազգային սահմաններ գոյութիւն չունին։

Մենք բոլորս ընկերներ ենք, մենք բոլորս եղբայրներ, քոյրեր ենք և մեզի համար ամենա փոքր հիմունք չկայ իրարու դէմ կռուելու։ Ձեր թշնամին ճաբոնացի ժողովուրդը չէ, այլ մեր զինուորականութիւնը և մեր՝ այսպէս կոչուած՝ հայրենասիրութիւնը. ինչպէս նաև մեր թշնամին ռուս ժողովուրդը չէ, այլ ձեր զինուորականութիւնը և ձեր՝ այսպէս կոչուած՝ հայրենասիրութիւնը։ Այո՛, հայրենասիրութիւնը և զինուորականութիւնը. — ահա՛ մեր ընդհանուր թշնամին։ Եւ ոչ միայն մենք, այլ բոլոր աշխարհի սոցիալիստները այս երևոյթներուն մէջ կը տեսնեն ընդհանուր թշնամին։ Մենք, սոցիալիստներս, պէտք է ճուան կռիւ մղենք անոնց դէմ և հիմա այդ բանին ամենալաւ առիթն է։ Մենք համոզուած ենք, որ դուք այս առիթը չպիտի փախցնէք, և մենք ալ մեր կողմէ պիտի ջանանք իգործ դնել մեր ձեռքէն եկածը։ Թոյլ տուէք մեզի քանի մը խօսք ալ ընել։ Մենք ոչ նիհիլիստներ ենք, ոչ ալ տէրօրիստներ, այլ սոցիալիստներ և կը կռուինք խաղաղութեան համար։ Մեր պայքարին մէջ մենք բոլորովին մէկդի ձգած ենք բռնի ուժի գործադրութիւնը և կը կռուինք խաղաղ միջոցներով, մտքի և բարոյականի ուժով։ Մենք կը կարծենք որ ձեզի համար այս միջոցներով կռուիլը և խաղաղ միջոցներով յեղափոխութիւն մը առաջ բերելը խիստ դժուար է, և

ԶՈՒԼՈՒՄԸ

ԿԵԱՆՔԸՆ Է ՏԷԿԱՆՈՐՍ.

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՕԷՄԱ.

Ազատութեան հայրը բռնութիւնն է,
Իսկ մայրը՝ անիրաւութիւնն.

(Շարունակութիւն)

Բ. ՏԵՍԱՐԱՆ

Վաղ առաւօտեան Մալխազ իշխանի պալատի առաջ խմբւած է գիւղացի ամբոխը, որին առաջնորդում են մի քանի զինւած երիտասարդներ։

Պալատի պատշգամբում զինւած կանգնած են զինուորներ ու ծառաներ. ամենից առաջ կանգնեցրւած են Բէհրամի որդիքը — Մինասն ու Ստեփանը։

Մի երիտասարդ. — (խրոխտ ձայնով ամբոխին)

Ահա եղբայրներ, հասել է այն ժամն
Երբ մենք կարող ենք մեր ոյժը ցոյց տալ.
Լուծել մեր վրէժն Մալխազ իշխանից
Գլորելով ցած նրան իւր թախտից,
Վիրան դարձնելով իւր այս պալատը,
Որ էլ չըմնայ այստեղ իւր հետքը։
Տեսէ՛ք, գեանս բազմած է այնտեղ
Այն արնածարաւ, քաղցած վիշապը.
Որ մեր ամենքիս արիւնն է ծծում.
Մեր եղբայրների արիւն-քրտինքով
Կանգնած, ճոխացրած այս ապարանքում
Նստած ընդ միշտ մեզ վրայ է ծիծաղում
Եւ մինչև անգամ մեր օջախների
Պատիւն ապարծել է համարձակւում։
Իսկ իւր ընչաքաղց, վատ, ստորաքարշ
Պաշտօնեաները էլ ինչե՛ր ասես,
Ի՛նչ խաղկութիւններ ասես, չեն անում...
Համբերել, տոկալ է՛լ չի կարելի.
Պէտք է վերջապէս վերջ տալ չարիքին։
Է՛յ, մի՛ երկնչէք. մի անգամ արդէն
Արիւն թափողը արյից չի վախիլ.
Իսկ մեր արիւնը հօ երէկ թափւեց.
Այդ արեան վրէժն գոնէ մենք լուծենք...
Դէ՛հ, արի եղէք. անշուշտ լսել էք
Թէ գեղը կանգնի՝ գերան կը կտրի...
Մենք էլ մի գեղ ենք ու մի գիւղացի.
Ձեռք տանք իրարու յանուն օջախի,
Քար ու քանդ անենք որջը գազանի։
Դէ՛հ, ա՛յ եղբայրներ քոյրեր, փոքրիկներ,
Թոյլեր, սիրտ առէք եւ յարձակւեցէք։
Կեցցէ՛ մեր օջախ, կեցցէ՛ մեր պատիւն,
Ցանուն օջախի խորտակենք չարին։

(Բահով, բրիչով զինւած ամբոխը դիմում է դէպի պալատի դռները. երևում է գալիս Լևոնը, ձախ վիրաւոր թևը կապած եւ գոչում դողդոջ ձայնով).

Լևոն — Դէ՛հ, հաւատակից դուք իմ եղբայրներ,
Ազնիւ ընկերներ, կորովի քաջեր.
Դէ՛հ, ձեզ տեսնեմ, հա՛... զէյրաթի օր է,
Դէ՛հ վիրան դարձրէք այս անիրաւի
Փալանանոցը, որ հէնց գազանին
Իւր բնում խեղդենք. մեր վրէժն լուծենք.
Է՛յ, բաւական է տարուել, ճորտ մնանք
Այս լիրբ, անիրաւ, պիղծ արարածին։

(Ամբոխն սկսում է քանդել պալատի դռները. վերևից մէկ-մէկ կրակ են անում ամբոխը ցրւելու համար, որին գոռում-գոչիւնով ամբոխը պատասխանում է քարերի տարափով, կամ մէկ մէկ կրակ անելով. Խիստ իրարանցում է տիրում թէ վերևում եւ թէ ներքևում. Վերևում բռնում են առաջ կանգնած Մինասին ու Ստեփանին խփել, կրակ անել, դոչելով).

Զինւոր եւ — Խփէք, անիրաւ, ի՞նչ էք էշի պէս
Թմրել ու կանգնել, խփէք, սատկեցրէք
Այդ ըմբոստներին...

Ստեփան [դողդոջ ձայնով] Ա՛հ, Տէր Աստւած,
Մեզ ստիպում են մեր եղբայրներին
Խփել. ի՞նչ անենք աւելի լաւ չէ՞
Այստեղից հէնց ցած նետւել ու պրծնել...

Զինւորներ — Խփէք սատկէք, ա՛յ անհաւատներ.

Մինաս — Ա՛խ, ի՞նչպէս խփենք մեր եղբայրներին։

Զինւորներ — Ահա թէ ինչպէս...
(հրացանի կոթով ջարդում են երկուսի էլ ուսերն).
Տեսա՞ք. դէ՛ խփէ՛ք.

(կատաղում են Մինասն ու Ստեփանը եւ յետ դառնալով իրանց հրացաններն ուղղում են դէպի զինուորականներն ու կրակ անում. ընկնում են երկու հոգի վիրաւոր).

Մինաս եւ Ստեփան. Ահա՛, համեցէ՛ք, այս էլ ձեզ խփել.
Դէհ, հանգստացէք ա՛յ անիրաւներ...

(Դառաններն ու զինուորներն յարձակւում են Մինասի եւ Ստեփանի վրայ ամբոխին թողնելով, որոնք յարմար ժամանակ են գտնում պալատի դըռներն քանդելու։ Վերևում սկսւում է տուր ու տուր ...)

Մինասն ու Ստեփանը փիմադրում են մէկ-

թէ Ռուսիոյ մէջ, սահմանադրական կարգերու չգոյութեան պատճառով, կարելի չպիտի ըլլայ կառավարութիւնը բռնութեամբ տապալելու փորձութեան չենթարկուիլ։ Բայց մենք, որ մարդասիրական սկզբունքներու համար կը կռուինք, պէտք է յիշենք որ նպատակը չարդարացներ միջոցները։

Մենք չենք կրնար նախատեսել թէ երկու կառավարութիւններէն ո՞րը յաղթող պիտի հանդիսանայ։ Բայց ով որ ալ յաղթէ, պատերազմի արդիւնքները ամեն պարագայի մէջ միևնոյնը պիտի ըլլան. — ընդհանուր թշուառութիւն, տուրքերու բարձրացում, բարոյական անկում և զինուորականութեան յետագայ զարգացումը։ Ահա թէ ինչու ո՞վ պիտի յաղթէ՝ ի հարցէն աւելի կարևոր է մեզի համար այն խնդիրը թէ ի՞նչպէս կարելի է աւելի շուտ վերջ տալ պատերազմին։

Մեզի իբր լաւ օրինակ կը բերնայ ծառայել այն դիրքը, որ ունեցաւ միջազգային բանուորական ընկերութիւնը և անոր ագիտացիան ֆրանքո–բրուսական պատերազմի ժամանակ։ Մեզի համար, ընկերներ և եղբայրներ, ամենափոքր պատճառ չկայ իրարու դէմ կռուելու։ Մարդկային զոհեր կը պահանջէ միայն մեր ընդհանուր թշնամին։ Եւ մեր ընդհանուր դիմադրութեան համար այդ թշնամիին, մենք, սոցիալիստներս, պէտք է իրարու ձեռք տանք Մարքս–Մարքսի կըտակին համաձայն։ «Բոլոր երկիրներու բանուորներ, միացէ՛ք»։

Թանկագի՛ն ընկերներ, ձեր կառավարութեան ճնշումին տակ տառապած ատեն և ձեր անդութ ոստիկանութենէն հալածուած ժամանակ մտաբերեցէք, որ հեռաւոր երկրի մը մէջ գտնուող հազարաւոր ընկերներ իրենց ամբողջ սրտով ձեզի երջանկութիւն և յաջողութիւն կը մաղթեն։

„Рав. Вѣстникъ“

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

X

ԲԻԲԻ–ՀԷՑԲԱԹՈՒՄ ԷԼ

(շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Եւ այնուհետև մտնելով նաւթահանք նա ընկնում է մի այլ աշխարհ, ուր այլևս չէ կարելի գտնել այն ամենը ինչ կայ գիւղում — բնութեան հրաշալի տեսարանները, օդը, ջուրը հայլն։ Բայց այստեղ կայ դարձեալ դառնութիւն, չարչարանք, այստեղ կայ հայհոյանքը կառավարչի գործակատարի, վարպետի. այստեղ է վերջապէս նրա բախտը իրեն խաղալիք գարձնող կապիտալիստը։ Եւ գիւղացին ընկած, ասում ենք, մի նոր աշխարհ իրեն անծանօթ, օտար՝ ընթանում է հարբստահարուղի մի նոր ուղիով։ Իսկ վարդապետն „ոյսե՞ր“։ Ա՜հ, այսօր նա մի սև կեանքից ընկել է մի այլ սև, դառնացած կեանքի արհաւիրքների մէջ ու գնում այն ուղիով, որը գծել են իրեն համար դրամատէրը, հասարակական ներկայիս օրէնքները, պետական կազմը։ Եւ նա, գիւղացին, այլևս բանուոր դարձած, այդպիսով, իր դարտերն ու ցաւերն է խառնում համաշխարհային, բազմամիլիոն ստրուկ բանուորների նոյնանման ցաւերի հետ, նա, այդպիսով, միանում է միջազգային ճորտերի վիթխարի բանակի հետ, պարտաւորւում է, ձգտում է նրանց հետ եղբայր դառնալ՝ միասին ուրախանալու, միասին վշտանալու, միասին գործելու՝ որովհետև միասին են տանջւում՝ և միասին եղ միայն իրենց. ընդհանուրի ըղձած յաղթանակը տանելու իվերջոյ։

Եւ գիւղական բազմաթիւ հարբստահարիչներից հեռացած՝ այսօր, նա, բանուորը, ընկած կապիտալիստի սուր ճանկերի մէջ, հառաչում է, արնաքամ և ուժասպառ լինում։

Այլևս երկու, որոշ շահերով և պատմական ձգտումներով իրար տրամագծօրէն հակառակ, դասակարգեր են, որ այսօր կատաղի կռուի, իրար տիրապետելու մրցման ասպարէզ են դուրս եկած։ Առաջինը՝ կապիտալիստ, ոչինչ չարդիւնաբերող և ամեն բան վայելող. երկրորդը՝ բանուոր, ամեն ինչ արդիւնաբերող, սակայն զուրկ կեանքի բոլոր վայելքներից, պատից, մարդկային արժանաւորութիւնից։

Առաջինը իրերի բնական ընթացքով հրապարակ եկած, իր ձեռքը գցած լինելով քաղաքական, տնտեսական բոլոր միջոցները՝ աշխատող ձեռքերը, ֆիզիքական ոյժերը իրեն դասակարգային շահերին և ձգտումներին է ծառայեցնում, մի որոշ ճանապարհի վրայ է դնում։ Այդ ուղին իր փառքի և երջանկութեան ուղին է, որովհետև նրանով ընթանալով նա, կապիտալիստ դասակարգը, աջ ու ձախ հարստահարում է, գողանում ու թալանում։ Եւ նա այդպիսով միշտ կարող կը լինի տիրապետող, հրամայող դասակարգ հանդիսանալ, աւելի և աւելի ամուր բռնած կը պահէ իր ձեռքում երկրի կառավարական ղեկը և այդպիսով ևս աւելի մեծ չափերով հարստահարելու հնարաւորութիւն, միջոց կունենայ։ Նա ոչինչ չի արդիւնաբերում, բայց ամէն բան է վայելում։

Երկրորդը նոյնպէս իրերի բնական ընթացքով առաջ եկած՝ բացարձակ գործիք է առաջինի ձեռքին, նրա՛ համար աշխատող, քրտիրք թափող և նրա՛ համար միայն ապրող, այնպէս՝ ինչպէս ապրում–կերակրում է մի ձի, մի եզ՝ տիրոջ մօտ աշխատելու համար։ Եւ այսօր, նա, բանուորը, ոչ մի միջոց չունի իր ձեռքում, որով կարողանայ իր մարդկային արժանաւորութիւնները ճանաչեցնել տալ, իր մարդկային պատիւը բարձրացնել ցեխի միջից, վերջապէս իր շահերը, այդ անվիճելի իրաւունքը, պաշտպանել և իր ձգտումների ուղին դէպ հարթել։ Նա ամեն տարի միլիոններ է աշխատում, գործ է դարձնում, հարուստին հնարաւորութիւն է տալիս անմիտ խրախճանքների մէջ իր օրերը անցկացնել շրջապատուած «հիւրի–փերիներով». նա հարուստի համար պալատներ է կանգնեցնում, որին «թէթ նայես, գլխարկդ վայր կընկնի». նա հարուստի անտուկները լցնում է փայլուն ոսկիներով. նա է, վերջապէս, որ շարժում է կեանքի անիւը, աշխարհիս անիւը։ Եւ ի՞նչն է իր բաժինը։ — Մի կտոր հաց նոյն հարուստի օգտին ֆիզիքական ոյժ ունենալու համարեա սև կեանք։ Եւ այս երկրորդն էլ՝ ամեն բան արդիւնաբերող, բայց ոչինչ չվայելող։

Այո՛, կապիտալիստը չէ որ գիշում է ոսկիների կոյտեր, այլ նախկին երկրագործը, այժմեան բանուորը։ Եւ բանուորը չէ, որ վայելում է իր աշխատանքի, արիւն քրտինքի վաստակը, պըտուղը, այլ՝ կապիտալիստը։

Եւ այդպիսով այդ երկուսի շահերը, ինչպէս վերևում ասացինք, իրար տրամագծօրէն հակառակ լինելով՝ առաջացնում են մրցումն, կատաղի կռիւ, գոյութեան անողոք կռիւ, որում, սակայն, բանուորը այսօր թոյլ է, անզօր, որովհետև միջոց չունի կռուելու, կապած են նրա ձեռքերը և չէ կարողանում դրանցով պոկելու մի կողմ նետել իր առողջ մարմնի մէջ խրած և դրա հիւթը, արիւնը ծծող տզրուկը։

Ի՞նչու։ — Որովհետև ա՛յն բացարձակ աւազակութիւնը, որ անում է կապիտալիստը. ա՛յն թալանը, գողութիւնը, որը յատուկ է նրան, — կատարւում է Ռուսաստանում տիրող ներկայիս կառավարական կարգերի, օրէնքների հիման վրայ, որով նա

մէկ կրակ անելով, ամբոխից խրախուսելով).

Ամբոխ—Կեցցէք դուք, Մինաս, Ստեփան ախպէրք.
Հա՛, ձեզ տեսնենք, հա՛... չան ատակ արէք
Էդ անարդ, վայրագ անիրաւներին։
Իսէր ձեր քրոջ ու ձեր օջախի
Հէչ մի՛ վհատէք... եղէ՛ք քաջարի...

(Այդ միջոցին, երբ արդէն պալատի դուռը սկսել էր ճռնչալ ու մօտ էր տապալուելու, պատշգամբի չէմքի վրայ երեւում է Մալխազ իշխանը երկիւղից ու կատաղութիւնից դողդղալով, եւ նախ բարկացած դիմում է ծառաներին գոչելով).

Մալխաս — Ամո՛թ ձեզ, ամո՛թ, յիմար անմիտներ...
(ապա դառնալով ամբոխին)
Է՛յ, ի՞նչ էք ուզում, ի՞նչ է պատահել,
Այդպէս կատաղել ու փրփրել էք.
Ուզում էք քանդել իմ տուն ու տեղը.
Ի՞նչ եմ արել ձեզ եւ ի՞նչ էք ուզում։

Ամբոխը — Ի՞նչ ես արել հա՞... էլ ուզում էիր
Թէ ի՞նչ անէիր. քի՞չ բան ես արել...
Ա՛յ դու անզգամ, համարձակում ես
Դեռ մեր երեսին մտիկ տալ. նայել...

Մալխազ — Ի՞նչ եմ արել հա՛,... վա՞տ եմ արել, որ
Սոված ու ծարաւ աղջկան բերել
Ուզում եմ հաց տալ, պահել, պահպանել...
Թէ չէք կամենում, այն ձեզ յետ կըտամ
Հէնց այս րոպէին. լոկ հեռու կացէ՛ք...
Ամօթ է անզգամ ձեզ այսպէս վարուել
Մի իշխանի հետ, որ միշտ ձեր բարին,
Ձեր լաւն է ուզել... ամո՛թ ձեզ համար։

Ամբոխը — Լո՛ւր, անզգամ... համարձակւում ես
Մեզ հետ ամօթի անունից խօսել...

(Արձակում են մի գնդակ. Մալխազն խկոյն եւ եթ փախչում, անյայտանում է)։

Ամբոխը — Դէհ, տղերք, պրծէք, քանդեցէք դուռը,
Հիմա անիրաւն ով գիտէ ինչ տեղ
Կը պահուի մեզնից, կամ թէ կը փախչի։

(Վերեւում, որ իշխանի ներկայութեամբ դադարեցրել էին կռիւը, էլի մի քանիսն սկսում են ամբոխի դէմ կրակ անել։ Այդ միջոցին ճռնչալով տապալւում է դուռն ու ամբոխի մի մասն ներս է խուժում։ Պալատի միւս կողմից, գաղտնի դռնից, Մալխազ իշխանն մի նժոյգ նստած փախչում է արագ։ Մարդիկ նկատում են այդ ու մի քանիսն նրա յետեւից են ընկնում, գնում ու գոչում).

Գնացողներն — Իշխանը փախաւ... բռնէք, հա, բռնէք...

(Այդ խօսքերը լսելով վերեւից զինուորներն ու ծառաներն սարսափահար փախչում են. մնում են միայն Ստեփանն ու Մինասը, որ իրար երես են նայում, ապա)

Մինաս — Եարաբ, ախպէր ջան, վերջապէս պրծանք
Էդ անիրաւի վատ ճիրաններից...

Ստեփան — Պրծանք, լա՛ւ պրծանք, է՛, փառք Աստուծոյ...
Ախպէր ջան, տեսա՞ր, ախար ասել են
Թէ գեղը կանգնի, գերան կը կոտրի...

(Նրանք էլ գնում են ներքեւ։ Ներսում տիրում է անագին իրարանցում. գոռում գոչում են, քանդում ամեն բան։ Ամբոխի միջից դուրս են գալիս Բէհրամն ու Լեւոնն մարած Սալբիին գրկած, որին տուն են տանում ուշքի բերելու)։

Բէհրամ — Ա՛խ, աղիզ բալա, վերջապէս էլի
Դու իմ գրկումն ես, էլի դու ինձ մօտ...

Լեւոն — Եւ ես, ա՛խ կրկին արժանացայ քեզ,
Թանկագին Սալբի... Հոգ չէ՛ բնաւին
Թէ արեան գնով մենք ձեռք բերինք քեզ...
Առանց արիւնի փրկութիւն չը կայ...

(Երեւում է Զմրուխտը Մինասին ու Ստեփանին գրկած)։

Զմրուխտ—Ախ, խեղճ զաւակներս, վերջապէս պրծաք
Ու ազատեցիք էդ անիրաւից...

Մինաս, Ստեփան — Մայրիկ, լա՛ւ պրծանք...

(գալիս է մի երիտասարդ ուրախ գոչիւնով)։

Երիտասարդ։ Մալխազն էլ ընկաւ...
Կէս ճանապարհին կրեց իւր պատիժն

Ամբոխը։ Է՛, փա՛ռք Աստուծոյ, պրծաւ ամեն բան.
Այսուհետ ի՛նչ էլ կուզէ թո՛ղ լինի,
Միայն մեր գլխին չը համարձակւի
Այլևս ո՛չ ոք իշխել... բռնանալ
Էլ բաւական է ի՛նչքան տանջւեցինք։

Երիտասարդ։ Դէհ այժմ ազատ ապրէ՛ք ձեր քէֆին

Զմրուխտ։ Եւ թող կեցցեն գեղն ու մեր գեղացիք

Ամբոխը։ Կեցցէ՛ յաւիտեան, կեցցէ՛ մեր օջախ,
Կեցցէ՛ մեր պատիւն...
Կեցցէ՛ եւ ուռա՛...

Վարագոյրն իջնում է։

(Վերջ)

պաշտպանութիւն և քաջալերութիւն է գտնում ցարի միապետութեան, նրա ոստիկանութեան, ժանդարմների, զօրքի կողմից։

Եւ ահա տնտեսական հողի վրայ կուտակուող բանուորների խառնիճաղանճ բազմութեան և նրա բարձրացրած հառաչ-հառաչ ճիչերի առաջ — դուրս է գալիս միապետական կազմակերպուած զօրաբանակը, [illegible]՝ պատրաստ նրան սրախողխող անելու, պատրաստ նրա արիւնը գետերի նման հոսեցնելու։

Ուրեմն, բանուորը, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս էլ Բիբի-Հէյբաթում, նախ պէտք է քաջ կերպով ուսումնասիրէ իւր դառն դրութիւնը, իմանայ դրա բուն պատճառը և ձեռք բերէ այդ վերացնելու միջոցների գիտակցութիւնը. մի խօսքով, նա պէտք է կրթուէ, զարգանայ երբև մի որոշ դասակարգ՝ ըմբռնած իւր շահերի իմաստը, պատմական կոչումը, վերանորոգիչ դերը։ Այս, այդպիսով կազմ ու պատրաստ, երբև սօցիալիզմի համոզուած, անվեհեր զինուոր, վե՛ր կենայ, վերջապէս, նաւթի կեղտերի միջից ու իւր կոշտացած ձեռքերում միայն զէնք բռնած՝ նետուէ ծանր, բայց սրբազան կռուի ասպարէզը։ Նա այնտեղ կը գըտնի իւր նման բազմաթիւ ստրուկ բանուորների, որոնք եղբայրաբար ձեռք կը տան նրան և միասին կը փշրեն կեանքի կապանքները, միասին կը վերացնեն մէջտեղից իրենց իսկական թշնամու հզօր պաշտպանին, միասին հարուած-հարուածի յետևից կը հասցնեն պառաւած միապետութեանը, որը «դոռում-գոչումով» կը գլորէ անդունդ յաւիտեանս գլորուելու այնտեղ։ Դա կը լինի նրա, բանուորի, ուղիղ հաղթումը, դա կը լինի նրա քաղաքական կռիւը, որը այժմեան միակ զէնքն է իւր ձեռքին։

Եւ միապետական կարգերը տապալելուց անմիջապէս յետոյ, նա, բանուորը, միանգամայն հընարաւորութիւն կունենայ իւր զուտ դասակարգային կռիւը մղելու։ Այդ ժամանակ միայն նրա ձեռքերի կապերը կտրատուած կը լինեն և նա միջոց կունենայ իւր մարմնի վրայից պոկելու արիւն ծծող այն տզրուկին։ Այդ ժամանակ միայն նա իւր հարստահարողի հետ հաշիւները մաքրելու յետևից կընկնի։

Ռուս բռնակալ կառավարութեան տապալելումն է, միևնոյն ժամանակ, որ պէտք է վերացած համարել ամենամեծ խոչընդոտն ու երդուեալ թշնամին և՛ ամբողջ հայութեան ազատագրութեան։

Այո՛, նախ պէտք է աղաղակել՝

Կորչի՛ միապետութիւնը։

Բագու Անիրիան

ՑԱՐԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻ՛ՒՆԸ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո՛ր կողմը որ գնաք, որ կողմը որ նայէք, դուք կը տեսնէք հիւանդ բանուորներ։

Ամեն անգամ բարեխնամ ցարը լեգալ թերթերի մէջ հրատարակում է մի նոր օրէնք բանուորների առողջապահութեան մասին, կամ յայտարարում, որ սանիտարական բժիշկները պարտաւոր են քաղաքներում ամեն մի փոքր կեղտոտութեան համար մեծ հսկողութիւն անել...։ Այս բոլորի մէջ ցարը ուզում է իրան ցոյց տալ, որ ժողովրդի՝ առհասարակ բանուոր դասակարգի բարեկամը, խնամատար հայրն է։

Մի երիտասարդ բանուոր՝ տեսնելով իր բանուոր ընկերների տանջանքը հիւանդութեան մէջ և գործարանի անկանոն բժշկական օգնութիւնը բանուորներին... մի յօդուած է գրում լեգալ թերթերին, որը չեն տպում սակայն և ամբողջովին բերում եմ այստեղ։

Նամակ Բաթումից

«Օրըստօրէ բանուորների մէջ լայն ծաւալ է ստանում թոքախտը ու հարիւրաւոր մարդկանց մահ է սպառնում։

Մարդիկ կը զարմանան եթէ ասեմ, որ թոքախտը միայն Մանթաշեանի նաւթարդիւնաբերական ընկերութեան գործարանի բանուորների համար է եկած այստեղ և իւր ծլերը տարածում ու ամրացնում է բանուորների թոքերի մէջ։

Մանթաշեանի գործարանը ունենալով մօտ 2100 բանուորներ, համարեա թէ բժշկից զուրկ է։

Այդ գործարանը մի բժիշկ ունի, որը ձեռքից Աստուած հեռու պահի։ Նա շաբաթը երեք օր է միայն գործարան գալիս, այն էլ մնում է կէս կամ մէկ ժամից ոչ աւելի, մինչդեռ գործարանը օրական մօտ 100 հիւանդ է ունենում։ Այդ բժիշկը լինելով գաւառական (окружной) բժիշկ, շատ անգամ բացակայ է լինում քաղաքից և պատահում է որ երբեմն որոշած օրերին չի կարողանում այցելել գործարանը։ Ասենք թէ իր ժամանակին էլ այցելում է՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ... ասացէք, խնդրեմ, արդեօք մի բըժիշկ կարո՞ղ է շաբաթւայ մէջ, երեք ժամում, նայել՝ օրական 100 հիւանդից՝ 600 հիւանդ։ Մի բժիշկ 600 հիւանդին երեք ժամում մատների արանքովն էլ չի կարող նայել, ուր մնաց որ նըրանց հիւանդութիւնը քննի ու դեղ որոշի։ Այդ հիւանդների մի մասը կարողանում է մասնաւոր բժիշկների դիմել ու առողջանալ, իսկ մեծամասնութիւնը մընում է առանց բժշկի. որովհետև շաբաթւայ որ օրն էլ որ հիւանդ բանուորը բժշկանոցն է գնում, բժիշկին չի գտնում. բըժիշկը գալիս է ճիշտ այն ժամանակ, երբ բանուորները ճաշի են դուրս գալիս։ Ո՛վ պիտի իր հանգստութեան 1 1/2 ժամը զոհի բժշկին տեսնելու համար, մանաւանդ բանուորներից, որոնք մի փոքր ցաւի ուշադրութիւն չեն դարձնում, որով ցաւը աւելանում և փոխւում է թոքախտի։ Երբ ցաւը սուր կերպարանք է ստանում, այն ժամանակ միայն թոքախտով վարակւած բանուորը մտաբերում է գիւղի հայրական տունը, կարծելով թէ հայրական տունը բժիշկ է դառնալու՝ իրան բժշկելու համար։ Յոյսը գիւղի հայրական տան վերայ դրած հիւանդը ուղևորւում է գիւղ, ուր մի քանի ամսից յետոյ կամ հանգչում է, կամ թէ չէ փոքր ինչ գիւղական թարմ օդով կազդուրւելով՝ կրկին վերադառնում է այստեղ աշխատանքը շարունակելու։ Բայց թէ՛ գործարանի և թէ՛ մանաւանդ սենեակի, — այն էլ ի՛նչ սենեակ, նեղ, մութ ու խոնաւ, ուր մաքուր օդին սովորած մարդը չի կարող կէս ժամ իսկ կանգ առնել ուշաթափ չլինելու համար... մինչդեռ մօտ 15—25 մարդ է ապրում այնտեղ, — հեղձուցիչ օդի մէջ կրկին սկսում են զարգանալ խաւարի կենդանիները (միկրոբները) և տարածւել հիւանդի թոքերի բոլոր կողմերը։ Այսպէս մի քանի շաբաթից յետոյ հիւանդ բանուորը՝ տեսնելով իր ցաւը կրկնապատկւած՝ դարձեալ թողնում է քաղաքը և դիմում գիւղ, վերագրելով իր ցաւը Բաթումի օդին. մինչդեռ 25 մարդու շնչով ապականւած խոնաւ սենեակի օդն է որ թունաւորում է թոքերը և զարգացնում ցաւը։ Ահա՛ այսպէս ամսական մի քանի թոքախտավարակ հիւանդներ ուղևորւում են գիւղերը, որոնցից վարակւում են ուրիշները և այս կերպով տարածւում է թոքախտը և օրըստօրէ զարգանում։

Այս մեծ չարիքի առաջն առնելու համար հարկաւոր է բանուորների կեանքը բարեփոխել գործարանատիրոջ հաշւին, տալ նրանց առողջապահական տեսակէտից շինւած սենեակներ, ինչպէս Բագւում է, և տալ լաւ հմուտ բժիշկ, որ կարողանայ ամեն օր, օրւայ մէջ առնուազն գոնէ 3—4 ժամ մնալ գործարանում, որպէս զի ամեն մի բանուոր իր մի անգամ ցաւած ժամանակը դիմի բժշկին շուտ հիւանդութեան առաջը առնելու համար, ո՛չ թէ անուշադիր թողնի՝ մինչև որ հիւանդութիւնը սաստկանայ և սուր կերպարանք առնի։ Քանի՜ քանի բանուորներ զոհ են գնացել բժշկի նուազութեան պատճառով։ Բայց պարոն գործարանատէրը երբէք չի ուզում մտածել այն բանուորների վերայ, որոնցով ինքը գոյութիւն ունի. արդեօք ո՞րքան պիտի նստի նոյնիսկ մշտական երկու բժիշկ պահելու ծախսը, որ պարոն գործարանատէրը այնքան դժուարանում է այդ անելու. կարծում եմ որ միլիոնների մօտ այդ գումարը կոպէկներ է...։

Ամեն մի անշունչ մեքենայի մօտ մի մարդ են կանգնեցնում նրա կանոնաւոր աշխատելուն համար. մի՞թէ 2100 բանուորների համար մի հմուտ բժիշկ չի հարկաւոր նրանց առողջութեան կանոնաւոր պահպանման համար. — Կարծում եմ ամեն մի մարդասէր անձ ձայն կը տայ որ հարկաւոր է... Եւ գործարանական օրէնքի 102-րդ յօդուածի հիման վրայ էլ պարտաւոր է գործարանատէրը այդ բոլորը կատարելու. բայց ո՞վ է ականջ դնողը։

Թէկուզ օրական տասը թոքախտաւոր Բաթումից դուրս գայ, դարձեալ տեսնող չկայ այս ահռելի հրէշի պատկերը, որը գաղտագողի մտնում է մարդուս թոքերը և աշխատող ուժին մահ սպառնում...»։

Ընթերցող, դուք գտա՞ք այս յօդուածի մէջ մի բառ ցարի կառավարութեանը հակառակ։ — Կարծեմ ոչինչ. որովհետև չկայ և գրուած է հէնց իրենց օրէնքի վրայ հիմնելով. բայց և այնպէս չեն թոյլ տալիս տպելու, որովհետև բանուորների մասին է գրուած և շօշափւած է գործարանատիրոջ կապիտալը։ Եւ մի՞թէ կարելի է ասել որ կապիտալիստների միլիոնների մօտ բժիշկի ծախսը կոպէկներ է։ Այդ չի կարելի տպել, որովհետև բանուորները կիմանան միլիոնների անունը, որ իրենց ձեռքովն է դիզւած, և կըսկսեն բուռն (գործադուլ) անել ու խալէյինների հանգստութիւնը խանգարել, որի համար ստիպւած պիտի լինի ցարի կառավարութիւնը իր կոզակներին ուղարկելու, որ բանուորներին մտրակով հնազանդեցնեն աշխատելու համար...։

Բանուոր ընկերներ! մեր ազատութիւնը կայանում է մեր եռանդի սերտ միութեան և գիտակցութեան մէջ, որով մենք ընդհանուր ոյժով, զանազան գործադուլներով և քաղաքական ցոյցերով ձեռք կը բերենք տնտեսական և քաղաքական ազատութիւն... որից յետոյ կը ծագէ նոր կեանք, նոր արև...։

Կ. — Սաղի

Բաթում 22 մայիս, 1904 թ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Առաջներս հրատարակւած է եղել «Վերածնութեան» մէջ — որպէս և մի քանի այլ լրագրերում — թէ՝ Աստրախանի երկու քահանաները՝ Գէորգ քհ. Մկրտումեան և Սեդրակ քհ. Աղաբալեան կառավարութեան են յանձնել եկեղեցական կալուածները և գոյքերը, երբև դաւաճաններ ստորագրել են յանձնման թուղթը, չնայած որ կարգադրւած է եղել ոչինչ չյանձնել, ևայլն, ևայլն։

Ճշմարտութիւնը վերականգնելու համար՝ բարոյական պարտք եմ համարում յայտնել, թէ այդ առթիւ քննութիւն նշանակւեց, որից երևաց որ յիշեալ երկու քահանաները Աստրախանի եկեղեցական գոյքերը յանձնելու գործում ո՛չ մի յանցանք չունեն և թէ, առհասարակ, այդ ամբաստանութիւնը հիմնւած է սխալ թիւրիմացութեան վրայ։

Ս. Տաշիր.

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Търг. печат. и лит. Меркуръ—Русе.